ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանին 2017 թվականի սեպտեմբերի 11-15-ը Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սուրեն Քրմոյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ սեպտեմբերի 11-15, Ֆրանսիայի Հանրապետություն

Հրավիրող կողմը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ)

Գործուղման նպատակը՝ ՏՀԶԿ Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մշտադիտարկման 18-րդ հանդիպմանը մասնակցություն

Քննարկված թեմաները՝

1. 3-րդ փուլի գնահատման արդյունքների հիման վրա Հայաստանին տրված հանձնարարականների կատարման առաջընթացի գնահատում:
2. Ուկրաինայի, Ղազախստանի, Տաջիկստանի 4-րդ փուլի գնահատման զեկույցների ներկայացում և քննարկում:
3. Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Մոնղոլիայի, Ղրղզստանի, Ուզբեկստանի առաջընթացի գնահատման զեկույցների ներկայացում և քննարկում:
4. 2016 թվականի գործողությունների ծրագրի արդյունքների ներկայացում:
5. Հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի ֆինանսավորման ռազմավարության ներկայացում:

6. Գնահատման մեթոդոլոգիայում փոփոխությունների կատարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
7. Կոնֆիսկացիայի և ակտիվների հայտարարագրման վերաբերյալ թեմատիկ ուսումնասիրության ներկայացում:
8. Հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի անդամ պետությունների կողմից իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումների ներկայացում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՏՀԶԿ Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մշտադիտարկման 18-րդ հանդիպման ընթացքում գնահատվել է 3-րդ փուլի գնահատման արդյունքների հիման վրա Հայաստանին տրված հանձնարարականների կատարման առաջընթացը: Քննարկվել և պլենար նիստի ընթացքում հաստատվել են Հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի ֆինանսավորման ռազմավարությունը, ներկա պետությունները ներկայացրեցին վերջին ժամանակահատվածում կատարված հակակոռուպցիոն բարեփոխումները: Հանդիպման ընթացքում քննարկվել և փոփոխություններ են կատարվել Ստամբուլի գործունեության ծրագրի 4-րդ փուլի մոնիթորինգի մեթոդոլոգիայում

Հայաստանի մասնակցության արդյունքները

2017 թվականի սեպտեմբերի 12-14-ը Փարիզում տեղի է ունեցած ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի պլենար հանդիպման ընթացքում գնահատվեց հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացված մոնիթորինգի 3-րդ փուլի հաշվետվության ամփոփումից հետո կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում Հայաստանի Հանրապետության կողմից գրանցած առաջընթացը: Նշված առաջընթացի

գնահատումը չափազանց կարևորվում էր այն առումով, որ իրականացվում էր 4-րդ փուլի վերջնական գնահատմանն ընդառաջ: Երկարատև բանակցությունների արդյունքում արձանագրվեց, որ Հայաստանը 23 հանձնարարականներից 5 հանձնարարականների կատարման առումով գրանցել է զգալի առաջընթաց, 16-ի կատարման առումով գրանցել է առաջընթաց, 2-ի դեպքում առաջընթաց չի գրանցվել:

Միաժամանակ, Հայաստանի ներկայացուցիչը ընտրվել է որպես հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի ղեկավար խմբի 22-րդ հանդիպման համանախագահ:

Գործուղվող անձ, ստորագրություն

Սուրեն Քրմոյան, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ